

Արմեն Հ. Ղարազյոզյան
Պատմ. գիտ. թեկնածու

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԷԹՆՈԿԱԿԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հյուսիսարևմտյան հատվածի և սահմանամերձ գոտու
քննության փորձ

Գ (Գ) ԳԱՐԻ, ԹԻՎ 4 (40) ԽՈՒՄԵՆԻԵՐ-ՊԵՂԿՐԵՄԵՐ, 2012
ՎԷՄ համահայկական հանդես

Հայկական լեռնաշխարհի էթնոաշխարհագրական միջավայրի դիտարկման տեսանկյունից կարևորվում են նրա հյուսիսարևմտյան հատվածն ու սահմանամերձ գոտին, որտեղ բնակվող ցեղերի մասին արժեքավոր տեղեկություններ են հաղորդում հին հույն հեղինակները:

Հատկապես ուշագրավ են խալդայների, խալյուրների, մոսինյակների և սկուրինների վերաբերյալ՝ եղած տվյալները: Այս ցեղերի ծագման մասին եղած հակասական կարծիքներին անդրադարձել են շատ հետազոտողներ: Ուշադրության են արժանի հատկապես Ն. Ադոնցի դիտողությունները: Ըստ վաստակ աշատ գիտնականի՝ իրավացի է Ստրաբոնը, որը հակված է Հոմերոսի *Άαυβη*- ու ուղղել որպես *Χααυβη* և նույնացնել **խալյուրներին** (*Chal-ybes*) և **խալդայներին** (*Chal-daei*) այդ անվանումների հավասարագոր լինելու պատճառով, քանի որ *ib*-ը և *-di*-ն հոգնակիության ցուցիչներն են²: Ընդունելի է նաև այն եզրահանգումը, ըստ որի *Alyba*-ն

*Խմբագրությունը համաձայն չէ հոդվածում տեղ գտած որոշ ստուգաբանությունների հետ, բայց հաշվի առնելով հեղինակի կողմից կատարված հսկայածավալ աշխատանքը, այն ներկայացնում է ընթերցողների դատին: Հոդվածն ընդունվել է տպագրության 15.10.2012:

1 Խալյուրները ապրելիս են եղել երկու տարբեր մարզերում, ցեղախմբերով՝ Պարիադրոս լեռան փեշերին և Սև ծովի ափին՝ մոսինյակների ու տիբարների միջև»: Տես **Քսենոֆոն**, Անաբասիս, թարգմանությունը Ս.Կրկյաշարյանի, Եր., 1970, էջ 262, ծան. 29): **Սկուրինները** տեղորոշվում են **ձորոխ** գետի ուղրանի շրջանում՝ **Բաբերդի** մոտ, որը հետագայում կոչվել է **Խալդիա**: Տես **Ն.Ադոնց**, Հայաստանի պատմություն, Եր., 1972, էջ 315: Բացառված չէ, որ նրանք կոչվել են իրենց բնակության վայրի՝ **Սկուրիսես** լեռների անունով, որոնք տարածվում են **Բաբերդից** հյուսիս, **ձորոխ** գետի երկայնքով: Տես **Ադոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 304-305:

2 Տես **Адонц Н.**, Армения в эпоху Юстиниана, СПб, 1908, с. 58. Ուրարտուից հարավ ընկած սեմիտները (ասսուրները, սիրիացիները, հրեաները որոշակի տոհմի-ցեղին (կամ մարդուն)

համապատասխանում է հայ. *Aliun, Alibn*³: Միևնույն ժամանակ Ադոնցը ավելի նվազ համոզիչ է համարում **այլուրների** նույնացումը **խալյուրների** հետ: Սակայն հենց իր՝ հետազոտողի դիտարկման համաձայն՝ «chal- և al (resp. hal) եղել են նույն անվան տարատեսակները»⁴:

Խեթերենի և հայերենի ընդհանուր լեզվատարրերի դիտարկումից երևում է, որ **խել** –ք բառի նախնական գաղափարը եղել է **գլուխ** (հմմտ. **կանուրջի գլուխ, տան կտուրը՝ գլուխը, նավի ղեկը՝ գլուխը**), որն ազգակից է համարվում խեթ. *hal* – *anta* բառի հետ: Խեթերենի *hal* – (*anta*) արմատի դիմաց հայերենում կարող է լինել **խալ** կամ **խաղ**՝ փոխառություն լինելու դեպքում⁵: Հետևաբար հնարավոր է, որ *hal* արմատից կարող էին առաջանալ **խաղայ** և **խալյուր** ցեղային անվանումները՝ նշանակելով **լեռների կատարներին բնակվողներ** կամ **լեռնագագաթների բնակիչներ**: Դա հաստատվում է **Կյուրոպեդիայի** տվյալներով, որոնց համաձայն՝ **խաղայները** եղել են լեռնաբնակ ժողովուրդ⁶:

Գերջան գավառը սահմանակցվում էր **Կարինին Խաղտոյ առիձ** բերդի (Կանդառիձ) մոտ՝ Սերգամ գետի և Եփրատի ջրկիցի շրջանում: **Խաղտոյ առիձի** գոյությունը ենթադրել է տվել, որ **խաղայների** մի մասը հաստատվել էր Ճորոխ և Եփրատ գետերի ջրբաժան լեռների հարավահայաց լանջերին⁸: Սակայն հնարավոր է, որ այդ տեղանունը էթնիկական ծագում չունի: **Առիձ** նշանակում է **տեղ, բնակատեղի**⁹: **Խաղտ** բաղադրիչը մատնանշել է տեղանքը որպես **բարձրադիր, անհասանելի, դժվարամատչելի** վայր: Հաշվի առնելով, որ **Խաղտոյ առիձը** եղել է բերդ, կարելի է արդարացված համարել սույն մեկնաբանությունը, որովհետև բերդ–ամրոցների կառուցումը սովորաբար պայմանավորված է եղել աշխարհագրական գործոնով: Կան նաև այլ նման ըմբռնումներ:

Ուշագրավ է, որ **խաղայներ** կամ **խալտայներ** ցեղային անվանումը դիտվել է որպես հայկական ծագում ունեցող անուն, որը, կապված լինելով **խաղտ** հասկացության հետ, նշանակել է **կոշտ, կոպիտ**: Դրանից կազմված են համարվում **խաղտալեզու, խաղտալուր, խաղտախուղտ** բառերը, որոնք արտահայտել են **թանձրախոս, կոշտ ու կոպիտ բարբառով խոսող** իմաստը¹⁰:

Նկատենք նաև, որ *al/ala* և *hal/hal* արմատաձևերը հանդիպում են հնդեվրոպական լեզուներում¹¹: **Խաղայների** կողմից Սև ծովին տրված

պատկանող անձնավորության համար ավելացնում էին – ai մասնիկը...»: Տես **Ղափանցյան Գ.Ա.**, Հայոց լեզվի պատմություն, Հին շրջան, Եր., 1961, էջ 56:

3 Տես **Адоиц Н.**, указ соч., с. 59, նույնի՝ էջ 315, ծան. 1:

4 Նույն տեղում:

5 Տես **Ղափանցյան Գ.Ա.**, նշվ.աշխ., էջ 175–176:

6 Տես «Հայ ժողովրդի պատմության քրեատոմատիկա», հ. I, Եր., 2007, էջ 224–226: Մերձսևծովյան **խալյուրները** հայտնի էին իրենց մետաղագործությամբ, և պատահական չէ, որ ցեղի անունը կապվում է հունարեն *Χάλυψ* «պողպատ» բառի հետ: Տես **Քսենոֆոն**, նշվ.աշխ. էջ 262, ծան.29:

7 Տես **Адоиц Н.**, указ соч., с. 52.

8 Տես **Հարությունյան Բ.Ը.**, Մեծ Հայքի վարչա–քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»–ի, Եր., 2001, էջ 101:

9 Տես **Ղափանցյան Գ.Ա.**, Հայոց լեզվի պատմություն, հին շրջան, Եր., 1961, էջ 67:

10 Տես **Հարությունյան Բ. Ը.**, նշվ.աշխ., էջ 95:

11 Տես **Ղարազյոզյան Ա.Ը.**, Հալթե դիցանվան ստուգաբանության հարցի շուրջ, ԳԳԸ,

Կակամար անունը նույնպես կարևոր փաստ է, որը վկայում է նրանց հնդեվրոպական ծագման մասին¹²: Հետևաբար **խալդայների** քարթվելական ծագման տեսակետն¹³ առավել քան անհավանական է:

Ուշադրության արժանի է **մոսսիոնյկներ** (Μοσσονοιχοι) ցեղային անունը, որը «հունարեն բառացի նշանակում է փայտե կառույցներում ապրողներ»¹⁴: Մեկնաբանությունը որոշ վերապահությամբ համարվում է տեղական եգրոյթի՝ հույների կողմից արված ժողովրդական ստուգաբանություն¹⁵: Ստրաբոնը **մոսսիոնյկներին** անվանում է **հեպտակոմետներ**¹⁶, որը նշանակում է «յոթ գյուղերում ապրողներ»¹⁷: Հայտնի է, որ մ.թ.ա. II դ. սկզբներին Արտաշես I-ը **խալյուբներից** և **մոսսիոնյկներից** գրավել էր **Փոքր Հայքին** սահմանակից **Կարինը** և **Դերջանը**, որոնք կցվել էին Մեծ Հայքի թագավորությանը¹⁸:

Ճորոխ գետի միջին հոսանքի ավազանում ապրում էին **տառխները**: Ըստ **Կյուրոպեդիայի**՝ նրանք բնակվում էին ամրացված վայրերում¹⁹: Հետաքրքրական է, որ **տառխները**, **խալդայները** և **կարդուխները** չեն եղել պարսից արքայի հպատակներ²⁰: **Տառխները** և **խալյուբները** որպես վարձկաններ ծառայել են **Արևմտյան Արմենիայի** հյուպարքոս **Տիրիբագոսի** գործում²¹: **Փասիս** գետի մոտ **տառխները**, **խալյուբները** և **փասյանները** նահանջող հունական զորքի դեմ դուրս էին եկել համատեղ ուժերով²²: Դա նշանակում է, որ նրանք ապրում էին հարևանությամբ:

Այս տարածաշրջանում հանդիպող ուրարտ. **Diaսhi** տեղանվան մեջ տեսանելի է հինդ. **Diaսh** (երկինք) կամ **Diaus** (**աստված**) բառաձևերը: Սրանք ծագումնաբանորեն առնչվում են ցեղակից լեզուների այնպիսի

գիտական հոդվածների ժողովածու, 1911, էջ 205: ԱI (hal) նախատիպը նշանակել է նաև **արև**: Տե՛ս **Н.Я. Марр**, Избранные работы, т. V, М.–Л., 1935, с. 477–478:

12 Տե՛ս **Петросян С.**, Древнейшие названия Черного моря, озер Урмия и Ван в свете мифологических представлений древних армян, «Լրաբեր հաս. գիտ», 1986, N 4, с. 53–57: Բ. Հարությունյանը հակված է կարծելու, որ **խալդայ** էթնիկական անունը հավաքական հասկացություն է և այդ անվամբ հասկացվում էին **սկյուրթեն** կոչված ցեղերը, որոնք իրականում սկյութական ցեղեր էին և Այրարկովկաս էին մուտք գործել կիմերական ու սկյութական ներխուժումների շրջանում: Հետագրտողը հնարավոր է համարում, որ **սկյուրթեն** անվանումը նույնպես եղել է ընդհանրական: Տե՛ս **Հարությունյան Բ.**, նշվ. աշխ., էջ 97:

13 Տե՛ս **Дьяконов И.**, История Мидии, М.–Л., 1956, էջ 351, ծան. 1, նույնի՝ Предыстория армянского народа, Е., 1968, с. 170–171; **Пиотровский Б.Б.**, Ванское царство, М., 1959, с. 117; **Меликишвили Г.А.**, К истории древней Грузии, Тб. 1959, с. 258.

14 **Քսենոֆոն**, նշվ. աշխ., էջ 267, ծան. 24:

15 Տե՛ս նույն տեղում:

16 Տե՛ս **Ստրաբոն**, Քաղեց և թարգմանեց Հ.Աճառյանը, Եր., 1940, էջ 75:

17 **Քսենոֆոն**, նշվ. աշխ., էջ 267, ծան. 24: **Հեպտակոմետները** նույնացվել են **սկյութիների** հետ և համարվել վրացական ցեղ: Տե՛ս **Меликишвили Г.А.**, указ соч, с. 81. Սակայն այդ ենթադրությունը հիմնագուրկ է: Տե՛ս **Հարությունյան Բ.**, նշվ. աշխ. էջ 100:

18 Տե՛ս **Ստրաբոն**, էջ 57: Ըստ Բ.Հ.Հարությունյանի՝ «...վերոհիշյալ երկու գավառների գրավումը մտածել է տալիս, որ գրավողները գտնվում էին դրանց հարևանությամբ: Այդ դեպքում թերևս խնդիրն առնչվում է ոչ թե խալյուբների, այլ խալդայների հետ, որոնց հույն աշխարհագրագետը հակված է նույնացնելու խալյուբներին»: Տե՛ս **Հարությունյան Բ.**, նշվ. աշխ., էջ 102–103:

19 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմության քրեատոմատիա», էջ 101:

20 Տե՛ս **Քսենոֆոն**, նշվ. աշխ., էջ 120:

21 Տե՛ս նույն տեղում, էջ 93, 94: Ժամանակին ենթադրվել է, որ այս վարձկան **խալյուբները** եղել են ուրարտացիներ: Տե՛ս **Մանանդյան Հ.**, Երկեր, հ. Ա, Եր., 1977, էջ 76:

22 **Քսենոֆոն**, նշվ. աշխ., էջ 99:

ձևերին, որոնք նշանակում են **աստված՝** կապվելով **լույս տալ, փայլել, ձառագել** իմաստներին²³: Իբրև **երկնքի** (կամ **արևի**) **աստված** հասկացության անվանում՝ նրանց համար վերականգնվում է հնդեվրոպական ***t'ieu** (**աստված**) բառարմատը, որի տարբերակներն են՝ ***t'eiuo** և ***t'iu**-ձևերը: Վերջինիս համար նախնական է **օր** իմաստը: Վաղ հայերենում ամենանախնականը **լույս** իմաստն էր, որից առաջացել են **երևացող երկինք** կամ **ցերեկ** հասկացությունները: Դրանք, ըստ առասպելական պատկերացումների, արտահայտվել են **մեծություն, մաքրություն, տևականություն** հատկանիշներով: Հնդեվրոպական ***t'ieu**-(հայ ***տի-և, թուի** ձևերն ունեն **ասել, պատմել, գովերգել** (Աստծուն), **աստված կանչել, արևագալը գովերգել** իմաստները, որոնք առկա են նաև ուրարտերեն *tia(u)* **ասել, պատմել** բառում, որից և նախնական իմաստի պահպանումով՝ ուրարտ. *Diau(e)hi* > **Տայք** տեղանունը²⁴:

Այսպիսով, ակնհայտ է, որ երկրանունը ունի հնդեվրոպական ծագում և նշանակել է **երկնքի** կամ **Արևի աստծո երկիր** (նաև՝ **Աստվածային երկիր**): Ըստ դրա՝ կարելի է բխեցնել նրա հնագույն բնակիչների ցեղային անվանումը՝ **երկնային աստծո որդիներ** կամ **արևորդիներ**²⁵: Հետագայում երկրանունը ձեռք է բերել նոր իմաստ՝ «Տիք և Տայք «խորխոր կոչին»․ այսպես ունի բառ. երեւ.»²⁶:

Ըստ Քսենոֆոնի՝ «հելլենները Փասիսից հետո հանդիպեցին խալյուրներին, տաոխներին, դարծյալ խալյուրներին, իսկ ըստ Դիոդորոսի՝ (Diodor., XIV, 29) «հույները հանդիպեցին խոյերին, փասիաներին և հասան խալդայների երկիրը»²⁷: Հեկատեոս Միլեթացին (մ.թ.ա. մոտ 540-մոտ 486 թթ.) **ՊՕԻ** – երին հիշատակել է պոնտական ցեղերի շարքում²⁸: Հավանաբար ցեղային անվանումը կապված է եղել պաշտվող աստվածության երկնային խորհրդանիշի անվան հետ: Այն հիշեցնում է հայերեն **խոյ** բառը, որը ծագած է համարվում հնդեվրոպական նախամայր լեզվի *ghoti* ձևից²⁹: Ժամանակին կապ են տեսել **Հայա – սա** խեթական տերմինի և **ՊՕԻ** – ցեղային անվան միջև³⁰: Այդ հնագույն էթնիկական անունը պահպանվել է Պարսկահայքում որպես բերդաքաղաքի անվանում³¹:

Մ.թ.ա. III հազ. սկսած՝ Գեղամա լեռների, Արագածի, Սյունիքի ժայռապատկերներում խոյը ներկայացվում է նշանագրի ձևով: Գեղամա լեռների

23 Տե՛ս **Համբարձույան Վ.Գ.**, Հայերեն աստված բառի ծագումն ու տիպաբանությունը, Եր., 2002, էջ 17-18:

24 Տե՛ս **Համբարձույան Վ.Գ.**, նշվ.աշխ., էջ 19 – 24: «Սեյսի կարծիքը, թե դիաուելիները դասական հեղինակների տաոխներն էին (taochoi), հայկական Տայքը, ընդունվեց Լեւնան-Հաուպտի և ուրիշների կողմից: Տայ-ք, սեռական՝ Տայոց- Tag-xoi, ավելի շուտ Dayaeni- ի հայկական ձևն է, երկիր»: Տե՛ս Ն.Ադոնց, նշվ.աշխ., Եր., 1972, էջ 209:

25 Ըստ **Ն. Ադոնցի՝ Դիաուելիսի** կամ **Դիաու-խին** հայրանվանական կամ դինաստիայի անուն է և նշանակում է **Դիաուի որդի**: Տե՛ս **Ադոնց Ն.**, նշվ.աշխ., էջ 203:

26 Տե՛ս **Աճառյան Հր.**, Հայերեն արմատական բառարան, հ. IV, Եր., 1979, էջ 411:

27 **Քսենոֆոն**, նշվ.աշխ., էջ 262: Անաբասիսի ռուսերեն թարգմանության ծանոթագրության մեջ նշված է չաբ: Տե՛ս **Ксенофонт**, Анабасис, перевод, статья и примечания М.И. Максимовой, под редакцией академика И.И.Толстого, М.-Л., 1951, с. 272, прим. 24.

28 Տե՛ս **Ադոնց Ն.**, նշվ.աշխ., էջ 273:

29 Տե՛ս **Աճառյան Հր.**, Հայերեն արմատական բառարան, հ. II, Եր., 1973, էջ 390:

30 Տե՛ս **Ադոնց Ն.**, նշվ.աշխ., էջ 273, ծան. 2:

31 Տե՛ս **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ.** Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ.2, Եր., 1988, էջ 768:

կոմպոզիցիոն նկարներից մեկում խոյր պատկերված է թռչունի, լուսին-արևի, ցլի և օձի հետ: Մ.թ.ա. III հազ. սև փայլեցրած խեցեղենի վրա կարելի է տեսնել խոշոր խոյագլուխ զարդանախշեր: Նման պատկերներ կան Գառնիում հայտնաբերված խեցեղենի վրա: Հանդիպում են խոյագլուխ քանդակներ Շենգավիթի և այլ վայրերի պաշտամունքային օջախների հենակների վրա: Դրանք ընդգծում են կենդանու կապը կրակի և լուսատուների հետ: Խոյագլուխ շքասեղներ հայտնաբերվել են Հառիճի վաղ բրոնզեդարյան սրբատեղիում: Խոյանշանների խմբերն ունեցել են համաստեղության արժեք: Խոյը նախնադարում եղել է տիեզերական պաշտամունքի առարկա: Նա կենդանական արի մեջ Ցլի և Երկվորյակների համաստեղությունների հետ կազմում է մի աստեղտուն՝ խորհրդանշելով գարունը: Խոյը համարվել է կենդանիների հոտի առաջնորդը և սերնդի պարգևատուն:

Դվինի նախնադարյան կրակարան-սրբատեղիներում կատարվել են գարնանային պտղաբերման տոնին նվիրված արարողություններ: Վանի թագավորության դիցարանը պահպանել է այդ ավանդները: Միջին դարերում հայերն օգտագործել են Խոյ համաստեղության նույն պատկերն ու նշանը՝ պահպանելով աստվածախմբի մասին եղած պատկերացումներն ու լեգենդները³²: Հետևաբար անհերքելի է չօժի ցեղի հայկական ծագումը: Իսկ չօժի-երի պոնտական ժողովուրդ լինելու մասին **Հեկատոնոսի** հիշատակությունը խոսում է նրանց և **արմենոխալյուրների** (armenochalybes) նույնացման մասին, մանավանդ, որ, այն համահունչ է հետևյալ տեղեկությանը. «Կողքիսի ամայի տարածությունների այն մասում, որը նայում է Կերավյան լեռներին, բնակվում են արմենոխալիբները»³³:

Պլինիոս Ավագի հիշատակած **արմենոխալյուրներ** էթնիկական անվանումը մեկնաբանվում է որպես **Հայաստանում բնակվող խալյուրներ**³⁴, **հայախալյուրներ**³⁵, **հայերի մեջ ապրող խալիբներ** (իմա՝ **խալյուրներ**)³⁶: Թերևս առավել ընդունելի է ցեղային անվան բացատրությունը **հայ լեռնաբնակներ** իմաստով: Ի դեպ՝ **արմենոխալյուրները** նույնացվել են **տառիսների** հարևանությամբ բնակվող **խալյուրների** հետ³⁷:

Փասյանների ցեղային անվանումը մատնանշում է միայն նրանց բնակության շրջանը՝ «Փասիս գետի շուրջը և եզերքները»³⁸: **Փասյան** (իմա՝ **փասիան, փասեան**) անունը կարելի է կապել պրո. **pas** («պահպանություն»)՝³⁹ բառի հետ, որը նախապես ներկայանում է որպես ռազմական հենակետի անվանում⁴⁰, իսկ այնուհետև հանդես է գալիս այլ ձևացումների տեսքով: Հավանական է, որ ինչպես տարածաշրջանի մյուս ցեղերը,

32 Տե՛ս **Մարտիրոսյան Հ.**, Գեղամա լեռների ժայռապատկերները: Տե՛ս «Հայաստանի հնագիտական հուշարձանները, 11, Ժայռապատկերներ», Եր., 1981, էջ 72-74:

33 «**Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա**», էջ 289:

34 Տե՛ս **Адоиц Н.**, указ соч., с. 59:

35 Տե՛ս **Հարությունյան Բ.**, նշվ. աշխ., էջ 97:

36 **Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա**, էջ 291:

37 Տե՛ս **Հարությունյան Բ.**, նշվ. աշխ., էջ 98:

38 **Աճառյան Հր.**, Հայերեն արմատական բառարան, հ. IV, էջ 483: Պատմագիտության մեջ **Փասիս** գետը նույնացվել է **Արաքսի**, **Պասին սու** գետի և **Ռինոնի** հետ: Տե՛ս **Քսենոֆոն**, նշվ. աշխ., էջ 262, ծան. 27, էջ 263, ծան. 31:

39 **Աճառյան Հր.**, Հայերեն արմատական բառարան, հ. IV, էջ 483:

40 Այդ տեսակետի օգտին են խոսում նաև **Քսենոֆոնի** հաղորդած տեղեկությունները: Տե՛ս նշվ. աշխ., էջ 99-103:

փասայանները նույնպես ունեցել են հնդեվրոպական ծագում:

Քսենոֆոնի երկում տեղ գտած **հեսպերիսներ** անվանումը հիմք է ծառայել եզրակացնելու, որ **Սպեր** գավառանվան մեջ պահպանվել է **աս** սկյութներից ցեղակից **ասպեր**-ների կամ **ասասպեր**-ների անունը⁴¹: Ընդ որում, անհայտ է համարվում, թե ի տարբերություն **աս**-երի, ինչ առանձնահատկության պատճառով է այդ ցեղախումբը կոչվել **ասպեր**-ներ⁴²: Տառացիորեն **ասպեր** (< * **ասբեր**) նշանակում է **աս** ցեղ⁴³: Նկատենք նաև, որ **ասպեր** անվանաձևը հայերենում **ս** – (***զ**) հնչյունի հավելմամբ կարող էր դառնալ **ասասպեր** կամ **ասասպեր**՝ նույնանալով Հերոդոտոսի հիշատակած **ասասպերներին**, որոնք **մատիենների** և **ալարողների** հետ միասին բնակվում էին Աքեմենյան Իրանի XVIII սատրապությունում⁴⁴: Նույն երևույթը տեսնում ենք **Սպեր** քաղաքանվան պարագայում⁴⁵:

Հարցի ուսումնասիրության առումով կարևորվում են **աստված** բառը հայերեն մեկնաբանելու փորձերը: Ժամանակին նրա **աս**- մասը կապել են հ.-ե. * **ansu** հիմքի հետ, որից ծագած է համարվել հինդկ. **asur-ra-**, ավեստ. **ahura** – իշխող բառերը⁴⁶: Հավանական է համարվել նաև (**հ**) **աստուած** «**ի հաստումն ածող, հաստող, հաստատող**» մեկնաբանությունը⁴⁷:

Մեկ այլ ստուգաբանության համաձայն՝ **աստուած** բառի **աս** – բաղադրիչը որպես առանձին արմատ ծագած է համարվում հնդեվրոպական. * **has** – «կրակարան, կրակի աղբյուր՝ կրակ (հիմքում՝ արև)» արմատից: Համեմատական լեզվաբանության մեջ **կրակ, այրել, չորանալ, մոխրանալ, մոխիր** իմաստային տարբերակների կրողն է համարվել հ.-ե. * **as** արմատը: Նրան են վերագրվել նաև **օջախ, զոհասեղան, զոհարան** իմաստները: Հիշատակության արժանի է նաև այն փաստը, որ հայերենում առկա են * **has** – կամ * **as** – արմատի աճականով և առանց աճականի տարբերակային դրսևորումներ⁴⁸:

Ըստ առաջարկված մի վարկածի՝ աստղանշան մեհենագրի միջոցով

41 Տե՛ս **Բ.Հարությունյան**, նշվ.աշխ., էջ 99:

42 Տե՛ս նույն տեղում:

43 Էթնիկական անվան երկրորդ՝ **բեր** (**bir/ber**) բաղադրիչը նշանակել է **տոհմ, ցեղ, տուն**: Տե՛ս **Ղափանցյան Գ.Ա.**, նշվ.աշխ., էջ 52-53:

44 Տե՛ս **Հերոդոտոս**, Պատմություն ինը գրքից, թարգմանությունը Ս.Կրկյաշարյանի, Եր., 1986, էջ 197-198 (III, 94):

45 Ըստ Ն. Ադոնցի՝ Մարկվարտը նկատել էր, որ Փարսալացի Կիրսիլոս և Լարիսացի Մեդետոս պատմիչների Տոսպիրուց – ը տարբեր է Տասպիրուց – ից (Հերոդոտոս, III, 94) կամ Կոսպիրուց – ից (Ստրաբոն, XI, 14, 9) և կամ՝ Տոսպիրուց – ից (Քսենոֆոնի Անաբասիսի վերջաբանը): Առաջինը Շուպրիան է, երկրորդը Սպերը: Ըստ այնմ նա իրավամբ ուղղում է Տոսպիրուց-ը Տոսպիրուց – ի, բայց սխալվում է, երբ՝ ուզում է Տասպիրուց – ում տեսնել վրացական նախածանց – **sa** – **ն**, երկու անունները զանազանելու համար: Իրականում խոսքը միևնույն ժողովրդի մասին է, որն իր անունը տվել է երկու վայրերի՝ տարբեր ժամանակաշրջաններում: Հռոդոսցի Ապոլոնիոսը իր «Argonautica» քերթվածում, 3, 395, կոչում է **Տասպիրուց** նույն երկիրը, ինչ որ Հերոդոտոսի մոտ **Տասպիրուց** –ն է: Դա թույլ է տալիս վերջինն ուղղել **Տասպիրուց**– ի, հայկական Սպերի համաձայն, ինչպես և ըստ Ստրաբոնի՝ **Կոսպիրուց**–ի և Քսենոֆոնի՝ **Տասպիրուց**–ի»: **Ադոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 279, ծան. 2: Ըստ **Բ.Հարությունյանի**՝ **Կոսպիրուց**– ը և **Քոսպիրուց**–ը նույնանուն են հայկական **Սպերի**: Սակայն ընդունելով **Տասպիրուց**– ի ծագումնաբանական աղբյուրը **Սպերի** հետ՝ նա տեղորոշում է **Տասպիրուց**– ը Վիրքի տարածքում: Տե՛ս **Հարությունյան Բ.**, նշվ. աշխ., էջ 76:

46 Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Հայկական շերտը ուրարտական դիցարանում, «ԳԲՀ», 1986, N 1, էջ 52:

47 Նույն տեղում:

48 Տե՛ս **Համբարձումյան Վ.**, նշվ.աշխ., էջ 27-28:

արտահայտված **աս** հնչյունախումբը հնդեվրոպական ծագում ունեցող բառ է և նշանակել է **աստուած**, որի մասին վկայում են նրան արմատակից **աստեալ**՝ «հաստատամիտ, զորավոր», **աստևոր**՝ «զորավոր, ձյնարիտ», **ասևան**՝ «գլուխ», **ավերուս**՝ «գլուխ, զորավոր, իշխան, պետ, առաջնորդ, գլխավոր» բառաձևերը⁴⁹: **Աավերուս** բառի (բաղկացած է * **աս** և **վեր** (< ber, bir) արմատներից)⁵⁰ և **ասբեր** ցեղանվան միջև կապն ակնհայտ է: Հետևաբար ցեղանունն արտահայտել է **գլխավոր, իշխող, առաջնորդող տոհմ, ցեղ** իմաստները: Այս պարզաբանումը վկայում է տարածաշրջանի տեղաբնիկների մտտ հնագույն շրջանում գոյություն ունեցող որոշակի կացութաձևի առկայության մասին, որը բնորոշ էր ռազմական դեմոկրատիայի ժամանակաշրջանին:

Հայտնի է, որ «միևնույն տոհմի կամ ցեղի հատվածները կարող էին լինել տարբեր և հեռավոր վայրերում»⁵¹: Այս կապակցությամբ նկատենք, որ **աս** բառարմատից ծագում է նաև **Ասեաց փոր** (> **Արսեաց փոր**) գավառանունը: Ըստ «Աշխարհացոյց»-ի՝ «... Արսեաց փոր առ Պարխար լերանքն, ընդ որ իջանէ Յոհ, գալով ի Սպերայ, անցանէ առ Թուխարս բերդով ի Կարջս, և անտի յԲար»⁵²: Ուշագրավ է, որ «Ստեփանոս Բյուզանդացին արևելապոնտական լեռները և հարակից ափամերձ շրջաններն ընդգրկող խալդիա (*Χαλδία*) բյուզանդական պրովինցիան անվանում է «հայկական երկիր» (*χαλδία χора της Ἀρμενας*)»⁵³:

Հարցի լիարժեք բնութայն համար կարևոր նշանակություն ունի նաև **ալարողների** և **մատիենների** բնակության շրջանների բացահայտումը: Այդ առումով հատուկ մեկնաբանության կարիք ունի **ալարող** (հուն. *άλαυδιος*)⁵⁴ էթնիկական անունը: Պատմագիտության մեջ ընդունված է հավասարության նշան դնել **ալարողների** և **ուրարտացիների** միջև⁵⁵: Հիշատակելի է, որ Urartu կամ Alarod (<* Ararod)= Ararat էթնիկական տերմինը նշանակել է **արևորդիներ** (Արևաստծո զարմ, սերունդ)⁵⁶: **Գի-աուելիսի** և **ալարող** ցեղային անվանումների համապատասխանությունն ըստ իմաստի հնարավորություն է ընձեռում **ալարողներին** տեղորոշել *Diau(e)hi* (**Տայք**) երկրի սահմաններում: **Ալարողների** և **սասպեյրների** բնակության վայրերի ձգբրտման հետևանքով ուրվագծվում է նաև այն բնաշխարհագրական շրջանը, որտեղ բնակվել են **մատիենները՝ Կապույտ** (Կապուտեն, Ծաղկավետ) լեռներն **Անտիպոնտական** համակարգում, որոնք ջրբաժան են Արևմտյան Եփրատի ու Ճորոխի միջև⁵⁷:

49 Տե՛ս **Պետրոսյան Ս.**, Հայոց մեհենագրության ակունքներում, Գյումրի, 2008, էջ 12-13:

50 Տե՛ս նույն տեղում, էջ 13:

51 **Ղափանցյան Գ.**, նշվ.աշխ., էջ 51:

52 **Երեմյան Ս.**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 110:

53 Տե՛ս **Петросян С.**, указ соч., с. 63.է

54 Ըստ հայտնի տեսակետի՝ «... արամեերեն բնագրից արված հունարեն թարգմանության մեջ *rrt-ը* տվել է հունական «ալարող»՝ *άλαυδιος* ձևը, որը բազմաթիվ լեզուներով տարածված առաջին *r-ի* հետադարձ տարմնանցեցման արդյունք է», **Չերոզոտոս**, էջ 576:

55 Տե՛ս **Меликишвили Г.А.**, указ соч., с. 266, **Пиотровский Б.Б.**, Ванское царство, М., 1959, с. 117, 121; **Ղափանցյան Գ.Ա.**, նշվ.աշխ. էջ 71; **Սարգսյան Գ.**, Մեկնություններ և ծանոթագրություններ, **Հերոզոտոս**, էջ 576-577; **Հարությունյան Բ.**, նշվ.աշխ., էջ 75-80:

56 Տե՛ս **Ղարազոզյան Ա.**, Նաիրի, Բիայնա, Ուրարտու և Հայք երկրանունների ստուգաբանության շուրջ, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2012, N 2-3, էջ 54, ծան. 31:

57 Տե՛ս **Հակոբյան Թ.**, **Մելիք-Քախչյան Սո.**, **Քարսեղյան Հ.**, Հայաստանի և հարակից

Մատիենների տեղորոշման հարցում կան տարակարծություններ⁵⁸: Հետաքրքիր է այն դիտարկումը, ըստ որի՝ «... մատիանները Միտաննիից էին, որի հին ձևը՝ Մատիե-նի, ավելի հարակցություն ունի Մատիա-նիի հետ»⁵⁹: Այդ տեսակետը հիմք է հանդիսացել եզրակացնելու համար, որ **Միտաննիի** բնակիչները գաղթել են Հայաստանի արևելյան շրջակայքը և իրենց անունը տվել **Ուրմիա** լճին, որը նախկինում կոչվում էր **Մատիանե**⁶⁰: Հայտնի է, որ **Ուրմիա** լիճն ըստ գունային հատկանիշի կոչվել է **Կապուտան (Մանտիանե կամ Մատիանա)**⁶¹: Բնականաբար նրա ավազանի կամ առափնյա մի հատվածի բնակիչները կկոչվեին **կապուտանցիներ**: Նույնը կարելի է ասել **Կապույտ** լեռների և նրա բնակիչների մասին: Ուստի կարելի է հիմնավորված համարել XVIII սատրապության մեջ ընդգրկված **մատիենների** տեղորոշումը **Կապույտ** լեռների շրջանում⁶²:

Ստրաբոնի մեկ այլ տեղեկության համաձայն՝ **Ատրպատականը** ունի լիճ, որը կոչվում է **Սպաուտան (Σπανταν)**⁶³: Այդ անվան մեջ փորձել են տեսնել **Ուրմիա** լճի **Կապուտան** անունը (*Σπανταν <*Kapanταν <*Kapanoutan*)⁶⁴:

Ըստ մեկ այլ տեսակետի՝ **Ուրմիա** լիճը կոչվել է *Σπανταν* (<*spait – an), որտեղ *սպայտ>սպետ (**սպետափառ** «պայծառ») համարվում է վաղ շրջանի փոխառություն և պահպանել է իրանական արմատի նախնական **լուսավոր** իմաստը⁶⁵: Այս ստուգաբանության օգտին է խոսում **Գեղամա ծով** լճանվանը թարգմանաբար տրված lychnitis **լուսավոր** անվանումը⁶⁶:

Այսպիսով, պարզվում է, որ **Ուրմիա** լիճը նրա առափնյա շրջանների (կամ նրա մի հատվածի) հնագույն բնակիչների կողմից կոչվել է **Կապուտան** կամ **Լուսավոր լիճ**, քանի որ ըստ գունային հատկանիշի ըմբռնվել է որպես **կապույտ, լուսավոր երկինք** կամ **երկնային հյուսք**: Նույն իմաստն է արտահայտել նաև Գեղամա ծովի մեկ այլ՝ **Սևան** անունը⁶⁷: Նշենք նաև, որ **Մանտիանա (Μαντιανα)** կամ **Մատիանա** («*Ματιαν*-*Her*. = *Ματινη*-, *ματιη* η հոնիերեն = **ματια*, *ματιηνοι* *οι* մատիաններ (ցեղ Մեդիայի *hu. ամ.*) *Her.*, *Her.*, *ματιηνο*՛*ς* մատիանական (Դη՝ *Her.*)»)⁶⁸ անվանաձևերի կապը ուղղակի է իմաստի առումով:

Մանտիանա անվան *μαν* (**ման**) բաղադրիչը ծագում է հնդեվրոպական

շրջանների տեղանունների բառարան, հ. II, Եր., 1988, էջ 953: Տե՛ս նաև «**Հայ ժողովրդի պատմության քրեատոմատիա**», էջ 290, ծան. 3:

58 Մանրամասն տե՛ս *Хазарадзе Н.К.*, К вопросу о локализации матиенов, ИФЖ, 1973, с. 200–210:

59 Տե՛ս *Աղոնց Ն.*, նշվ. աշխ., էջ 279:

60 Տե՛ս նույն տեղում:

61 Տե՛ս Տրաբոն, XIV, 8, прим. 5.

62 Հետազոտողները Մարաստանի **Մատիանա** գավառը տեղորոշում են Ուրմիա լճի ավազանում: Տե՛ս **Քսենոֆոն**, նշվ. աշխ., տե՛ս քարտեզը՝ նրա հարավային հատվածում: Տե՛ս Հայաստանի ազգային ատլաս, Եր., 2008, էջ 23), որը տարածականորեն համապատասխանում է հին աշխարհի **Մանա** երկրին:

63 Տե՛ս Տրաբոն, XI, 13, 2.

64 Տե՛ս *Ստրաբոն*, էջ 47:

65 Տե՛ս *Петросян С.*, указ. соч., с. 53–63.

66 Տե՛ս **Ղարազյոզյան Ա.Հ.**, Գեղամա երկիր (պատմաաշխարհագրական ուսումնասիրություն), Եր., 2004, էջ 21–22:

67 Տե՛ս **Ղարազյոզյան Ա.Հ.**, Գեղամա երկիր, էջ 22:

68 Տե՛ս Տրաբոն, XI, 8, прим. 5 (с. 824), *Дворецкий И.Х.*, Древнегреческо–русский словарь, т. II, М.– 1958, с. 1056.

նախամայր լեզվի *mænu* – **փոքր, մանր** բառից⁶⁹: Անվան երկրորդ՝ **tia** բաղադրիչը հանգում է հինդ. *Dyaub* «երկինք» (հմմտ. ուրարտ. **tia** «ասել, պատմել») բառին՝ արտահայտելով **Փոքր երկինք** իմաստային տարբերակը⁷⁰:

Հարցի ուսումնասիրության առումով հետաքրքրություն է ներկայացնում չորս ավետարանիչներից առաջինի **Մատթէոս** (հմմտ. հուն. *Μαθθαιος*, լտ. *Matthaeus*, ֆրանս. *Matthieu*, անգլ. *Matthew*, գերմ. *Matthäus*, ռուս. *Матвей*, հայ. **Մաթէոս, Մաթիոս, Մատթոս, Մաթոս, Մատթէ, Մաթնոս, Մաթէ**) անունը, որը մեկնաբանվում է որպես **երկնային / պարզ և երգ կենաց**⁷¹: Անձնանվան և ցեղանվան հնարավոր կապը թույլ է տալիս նշված իմաստները տեսնել նաև լճանվան պարագայում: Նույնը կարելի է ասել նաև **Կապույտ** լեռների մասին: Հայտնի է, որ **լեռը** հանդիսացել է նաև **երկնքի** նշանակ⁷², ուստի հայերեն **մատն**, ավեստ. *mati* (**լեռնագագաթ**) բառերը (հմմտ. ուրարտ. *Matni/u*)⁷³ նույնպես կարող են հիմք հանդիսանալ էթնիկական անվան ստուգաբանության համար: Ըստ Հերոդոտոսի՝ **մատիանները** բնակվում էին **Մատիանե** երկրում⁷⁴, Աքեմենյան Իրանի XVIII սատրապությունում⁷⁵ և **Հալիսի** ոլորանի շրջանում՝ գետի աջ ափին⁷⁶, ինչպես նաև **Միտաննի** երկրում⁷⁷:

Մասպեյրների և կոլխերի բնակության շրջանների մերձավորության⁷⁸, ինչպես նաև Աքեմենյան Իրանի XVIII սատրապության կազմի մեջ **սասպեյրների, մատիենների և ալարոդների** ընդգրկված լինելու մասին փաստերը վկայում են այդ վարչատարածքային միավորի և կոլխերի երկրի սահմանակցության մասին և մատնանշում Ճորոխի ավազանը որպես XVIII սատրապության զբաղեցրած տարածք: Հիշատակելի է, որ մ.թ.ա. II դ. առաջին կեսին **Պարիադրես** լեռան ստորոտի հողերի (= Ճորոխի ավազան) հայաբնակ լինելու փաստն արդեն հայտնի իրողություն էր⁷⁹:

Այսպիսով, Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևմտյան հատվածի և նրա սահմանամերձ գոտու էթնիկական անվանումների և տեղանունների ստուգաբանությունը ցույց է տալիս, որ դրանց առաջացումը պայմանավորված էր աշխարհագրական գործոնով և դիցաբանական պատկերա-

69 Տե՛ս Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. III, Եր., 1972, էջ 255:

70 Ըստ Ն. Մաթի՝ *M-[n] ti- an-e* ձևում առկա է **կանաչ, կապույտ, երկնագույն** նշանակությամբ բառը: Հետագայում ներգաղթած արիո – եվրոպացի իրանցիները միայն թարգմանել են իրենց լեզվով հարեթական *Mantiane / Matiane* անվանումը, երբ անվանակոչել են *Karoyt*, որը ներդրվել է նաև հայերենում և հայկական աշխարհագրական անվանացանկում որպես **Ուրմիա** լճի անվանում: Տե՛ս **Մաթ Հ.Կ.**, *указ. соч.*, т. V, М.–Л., 1935, с. 15–16:

71 Տե՛ս Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Եր., 1946, էջ 218:

72 Տե՛ս **Մաթ Հ.Կ.**, *указ. соч.*, с. 163.

73 Տե՛ս Առաքելյան Բ.Ն., Սարգսյան Գ.Խ., Զահուկյան Գ.Բ., Ուրարտու–Հայաստան, Եր., 1988, էջ 153:

74 Հերոդոտոս, էջ 83:

75 Տե՛ս նույն տեղում, էջ 197:

76 Տե՛ս նույն տեղում, էջ 32, 409:

77 Ըստ Ն. Ադոնցի՝ Միտաննիի կենտրոն Օսրոնենն եղել է միտաննական ցեղի օրբան:

Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 272:

78 Տե՛ս նույն տեղում, էջ 234:

79 Տե՛ս **Տրաբոն**, *География в 17 книгах, перевод, статья и комментарии Стратановского Г.А., под общей редакцией проф. Утченко С.Л., редактор перевода проф. Крюгер О.О., Издательство “Наука”, XI, 14, 5.*

ցումներով:

Summary

ETYMOLOGY OF ETHNIC NAMES AND TOPONYMS OF THE ARMENIAN HIGHLAND

An attempt to examine North-western part and boundary lines

Armen H. Gharagyozyan

Owing to the observations of the Armenian plateau's ethno-geographic environment, it is confirmed that Achaemenid Empire's XVIII satrapy was formed with Tchorokh basin from the beginning of the VI century. The etymology of ethnic names of the tribes inhabiting that territory indicates their Indo-European – Armenian descent. Though, in the first half of the II century it was obvious that Tchorokh basin was populated by Armenians.

As a result of Armenian plateau's ethno-geographic observation it was discovered that the provisional name of the **lake Van** was **Aghi tsov**, which meant **the Sea of Sun** or **God Sun's sea**. The same meaning is conspicuous also in the name Aghtamar and is derived from the provisional version Alde of mythological name Halde.

The lake Urmia was perceived through its color characteristics as blue, clear sky or heavenly plait, celestial gift and vivifying song, as well as the name Sevan of the lake-name Geghama tsov.